

ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱՅՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ 20-21-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Լուսինե Պետրոսի Պետրոսյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, ք. Երևան, ՀՀ

Lus8990@gmail.com

Հնդվածում ներկայացված են ներքին միջավայրի որմնանկարային գրաֆիկայում կիրառվող նյութերը և տեխնոլոգիաները 20-21-րդ դարերում: Ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել բազմաթիվ նորարական մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք կիրառվում են մեր օրերում գրաֆիկական որմնանկարներ ստանալու համար: Այդ տեխնոլոգիաների կիրառումը մասնագետներին տալիս է նոր հնարավորություններ ներսույթի դիզայնում խնդիրների լուծման համար: Հնդվածում ներկայացված են նաև որմնանկարաչության մեջ կիրառվող տեխնոլոգիաների, նյութերի դրական և բացասական կողմերը: Մանրամասնորեն անդրադարձ է կատարված որմնանկարային գրաֆիկայի յուրաքանչյուր մեթոդին և կիրառվող նյութերին, ինչը կօգնի ոլորտի մասնագետներին ընտրել որմնանկարին առավել համապատասխան նյութ և տեխնոլոգիա աշխատանքը լավագույնս կատարելու համար: Հնդվածը միտված է օժանդակելու ինչպես դիզայններնկարագրողներին, այնպես էլ նախագծող դիզայներներին իրենց մասնագիտական աշխատանքում, և ծանոթացնելու ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների հետ, որոնք օգտագործվում են ներսույթում գրաֆիկական լուծումներ ստանալու համար:

Բանալի բառեր. նյութեր, տեխնոլոգիաներ, մեթոդ, որմնանկարային գրաֆիկա, ներքին միջավայր, ներսույթ

Ներածություն

Որմնանկարչությունը գեղանկարչության մի ճյուղ է, որն իրենից ներկայացնում է պատերի, առաստաղների կամ ճարտարապետական շինության այլ մակերեսների վրա փակցված պատտառի, թղթի և այլ նյութերի վրա պատկերներ, զարդապատկերներ ստեղծելու արվեստը, ինչպես նաև անմիջապես պատի, առաստաղի և ներքին միջավայրի այլ մակերևույթների վրա տպագրված կամ ձեռքով նկարված պատկերների կամ այլ գրաֆիկական էլեմենտների օգտագործումը: Որմնանկարչությունը և որմնանկարային գրաֆիկան մարդկային արվեստի ամենավաղ ձևերից են, որոնց հնագույն մնացորդները հայտնաբերվել են քարանձավներում և հնագույն շենքերի պատերին: Որմնանկարչությունն էապես կապված է հասարակության բնույթի, շրջակա միջավայրի և հատկապես հին և ժամանակակից ճարտարապետության հետ, որպես սովորույթների, ավանդույթների, կրոնական և սոցիալական ծեսերի, մշակութային և քաղաքական իրադարձությունների արտահայտչամիջոց [1]: Նյութերի, գործիքների, տեխնիկայի և ժամանակակից տեխնոլո-

գիտաների օգտագործումը որմնանկարների ձևավորման մեջ արտացոլում է գեղագիտական, մշակութային պատկանելիության արվեստի դերը և այդպիսով հանգեցնում ժամանակակից որմնանկարչության ավելի խորը հայեցակարգի, որը նպաստում է գեղագիտական փորձի հարստացմանը և իրագրելիության բարձրացմանը [2]: Որմնանկարները կարևոր դեր են խաղում ճարտարապետական ձևի միասնության և համախմբվածության մեջ: Այս հոդվածում ուսումնասիրվել են ներքին միջավայրում կիրառվող ժամանակակից որմնանկարային գրաֆիկայի նյութերը և տեխնոլոգիաները: Ներսույթի ժամանակակից որմնանկարային արվեստը դուրս է գալիս ավանդական որմնանկարային ձևերից, այն ընդգրկում է տարբեր մեթոդներ և տեխնիկա, ներառյալ գրաֆիտին, նախշակադապարային արվեստը, թվային շարժական արվեստը, պատկերային պաստառները և այլն: Այս ժանրը խախտում է սահմանները՝ միախառնելով գեղագիտությունը սոցիալական մեկնաբանությունների, մշակութային բազմազանության և անձնական գաղափարների հետ: Պայմանական արվեստի սահմանները ճեղքելով՝ ժամանակակից որմնանկարային գրաֆիկական արվեստը առաջարկում է նոր հեռանկարներ դիզայնի ոլորտում: Որմնանկարների եզակի կողմերից մեկը ձևավորումն ու գործառույթը անխափան կերպով համատեղելու նրա կարողությունն է: Ի տարբերություն ավանդական նկարների կամ տպագրության, որմնանկարները կարող են հարմարեցվել ցանկացած չափի մակերևույթներին՝ ապահովելով տարածքի կատարյալ համապատասխանությունը:

Նյութեր և մեթոդներ

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս թե ժամանակակից նորարարական մեթոդները, թվային դարաշրջանն ու տեխնոլոգիաներն ինչպես են անդրադառնում այս ոլորտի վրա և փոխում մեր պատկերացումը որմնանկարների կատարման ընդունված նյութերի և տեխնոլոգիաների վերաբերյալ: Ուսումնասիրությունը կատարվել է՝ օգտվելով համացանցում առկա գրականությունից, կայքերից և հետազոտություններից: Ստորև ներկայացված են հետազոտության արդյունքում դուրս բերված ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները և նյութերը, որոնք կիրառվում են որմնանկարային գրաֆիկայում:

Որմնանկարային գրաֆիկայի տեխնոլոգիաները ներքին միջավայրում 20-21-րդ դդ. հանդես են գալիս հետևյալ մեթոդներով՝ ձեռքով նկարված որմնանկար, պաստառային որմնանկար, ինքնակաշուն թղթի վրա տպված պատկերներ, անմիջապես պատի մակերևույթին տպագրված գրաֆիկա, պրոեկցիոն որմնանկարչություն:

Ձեռքով նկարված որմնապատկերային արվեստը ստեղծվել է նկարիչների կողմից՝ օգտագործելով տարատեսակ ներկեր և պատի մակերևույթ: Ձեռքով նկարելը թույլ է տալիս նկարչին ստեղծել եզակի ստեղծագործություններ գույնի և տեքստուրայի յուրահատուկ տատանումներով, որոնք չեն կարող կրկնօրինակվել տպագրության միջոցով: Ձեռքով նկարված որմնանկարները դիտարկվում են որպես արվեստի նմուշներ, որտեղ հեղինակ արվեստագետները ստեղծում են յուրահատուկ, ստեղծագործ պատկերներ և որոնք ունեն մեծ ազդեցություն դիտորդի վրա: Այս

ճյուղն իրենից ներկայացնում է մեծամասշտաբ աշխատանքներ, որոնք յուրօրինակ են կատարման և ընկալման մեջ: Այս տեխնիկան նկարիչից պահանջում է բարձր մակարդակի հմտություն, համբերություն և մանրուքների նկատմամբ ուշադրություն, ինչի արդյունքում ստեղծվում է իսկապես յուրահատուկ և անհատական ստեղծագործություն [3]:

Ձեռքով կատարված որմնանկարչության որոշ հիմնական տարրեր ներառում են գույնը, մակատեսքը, հորինվածքը և այլն: Գույնը, թերևս, ամենաուշագրավ տարրն է, քանի որ այն կարող է զգացմունքներ առաջացնել և ստեղծել որմնանկարի ընդհանուր տրամադրությունը: Հորինվածքն արվեստի ստեղծագործության մեջ ստեղծում է տեսողական տարրերի դասավորություն, հավասարակշռություն, համաչափություն կամ ասիմետրիա: Գրագետ հորինվածքը կարող է օգնել, առաջնորդել դիտողի աչքը և ստեղծել ներդաշնակության զգացում ստեղծագործության և տարածական միջավայրի մեջ: Նկարագարողումը կարելի է անել մատիտներով, տեմպերայով, գուաշով, ակրիլային ներկերով, յուղաներկով, սփրեյ ներկերով և այլն [4]: Նկարագարման համար ներկերի ամենանախընտրելի տարբերակն ակրիլային նկարչական ներկերն են. դրանք արագ են չորանում, ի տարբերություն յուղաներկի, լավ են փոխազդում պատի մակերևույթի հետ, չունեն հոտ և աշխատելը բավականին դյուրին է: Ուղիղ բաժանումներ և երկրաչափական ձևեր ստանալու համար օգնության է գալիս կաշուն թղթե ժապավենը: Նկարիչ-դիզայներները սկսեցին փորձարկել երկրաչափական ձևավորումները՝ իրենց որմնանկարներում ներառելով բարդ նախշեր և ձևեր: Կաշուն ժապավենը դարձել է կարևոր գործիք ճշգրիտ անկյուններ և մաքուր եզրեր ստանալու համար: Մրա օգնությամբ կարելի է ստանալ սիմետրիկ նախշեր և բարդ երկրաչափական պատկերներ, որոնք նախկինում դժվար էր կառուցել ձեռքով: Ժապավենի տեխնիկայի այս բեկումը նոր հնարավորություններ ստեղծեցին որմնանկարիչների համար՝ թույլ տալով նրանց ընդլայնել իրենց ստեղծագործության սահմանները [5]: Ժապավենի տեխնիկայի ամենակարևոր առաջընթացներից մեկը եղավ այն գիտակցումը, որ ժապավենը կարող է օգտագործվել որպես դիմակ որմնանկարի համար: Շերտավորելով ժապավենը որմնանկարի մակերեսին, նկարիչները կարող են խորություն և հարթություն ստեղծել իրենց ստեղծագործության մեջ [6]:

Սփրեյ ներկը երկար ճանապարհ է անցել 1940-ականներին իր գյուտից հետո՝ վերածվելով արվեստի հանրաճանաչ ձևի, որն իր ճանապարհը գտել է որմնանկարների արվեստում: Սփրեյ ներկի օգտագործումը, որպես որմնանկարչության մեթոդ, կարելի է վերագրել 1970-ական և 80-ական թվականների գրաֆիտիի արվեստի վերելքին: Այսօր սփրեյ ներկը լայնորեն օգտագործվող միջոց է որմնանկարչության մեջ, շատ նկարիչներ այն նախընտրում են ավանդական ներկից: Հիմնականում այս ներկերով արվում են գրաֆիտիներ արտաքին պատերի վրա, սակայն կան նաև ներսույթում արված որմնանկարներ աերոգոլային սփրեյ ներկերի օգնությամբ [7]:

Նախշակադապարի կիրառումը որմնանկարչության մեջ հայտնի է դեռ հնուց, երբ ժամանակի վարպետներն օգտագործում էին այս տեխնիկան սիմետրիկ կրկնանախշեր և զարդանախշեր ստանալու համար: Այս մեթոդը մեր օրերում ևս մեծ տարածում ունի:

Ձեռքով արված որմնանկարները ինչպես հնում, այնպես էլ 21-րդ դարում չեն կորցրել իրենց արդիականությունը, արժեքն ու յուրահատկությունը, քանի որ անկախ դրա կատարման մեթոդից այս տեխնոլոգիան մնում է յուրահատուկ իր կատարման և զգացողությունների փոխանցման մեջ: Ձեռքով նկարված որմնանկարները որմնանկարային արվեստի դասական և հարուստ ավանդույթներով ուղիներից են, որոնք պահպանել են իրենց արժեքն ու գեղագիտական նշանակությունը դարեր շարունակ: Այս տեխնիկան, որը նկարիչից պահանջում է բացառիկ վարպետություն և մանրակրկիտ աշխատանք, ծառայում է ոչ միայն որպես գեղարվեստական ինքնադրսևորման միջոց, այլև որպես միջավայրի մշակութային և պատմական առանձնահատկությունները արտացոլող գործիք: Այս մեթոդն ապահովում է երկարատևություն և խոր գունային էֆեկտներ, որոնք հնարավոր չեն տպագրության կամ այլ ժամանակակից մեթոդների կիրառման ժամանակ: Ձեռքով կատարված որմնանկարները հաճախ օգտագործվում են ոչ միայն գեղագիտական, այլև գաղափարական նպատակներով: Դրանք կարող են արտահայտել սոցիալական, պատմական կամ կրոնական թեմաներ՝ ձևավորելով հզոր տեսողական հաղորդակցություն հասարակության հետ: Ավելին, այս արվեստի ձևը, լինելով տեղակայված անմիջապես տարածքում, ինտեգրվում է ճարտարապետության մեջ, ստեղծելով ներդաշնակ փոխհարաբերություն միջավայրի և գեղարվեստական ստեղծագործության միջև: Այսպիսով, ձեռքով կատարված գրաֆիկական որմնանկարները շարունակվում են մնալ արվեստի երկարակյաց ձևերից մեկը, համատեղելով ավանդույթն ու վարպետությունը, փոխանցելու գաղափարներ և հույզեր սերունդների միջև:

Պաստառները դարեր շարունակ զարդարել են պատերը: 21-րդ դարում այս մեթոդը վերածնունդ է ապրում՝ ցանկացած ներքին միջավայրի մեջ բնավորություն և ոճ ավելացնելու ունակությամբ: Պաստառային որմնանկարները ի սկզբանե տեղծվել են որպես հարուստ խավի համար ձեռքով նկարված արվեստ՝ այն վերածվել է պատերին դրամատիկ, լայնածավալ ձևավորումներ ավելացնելու միջոցի: Այս էվոլյուցիան պայմանավորված է տպագրական տեխնոլոգիայի առաջընթացով և դիզայնի միտումների փոփոխությամբ: Պաստառների պատմությունը սկսվում է 14-րդ դարից, երբ խաչակրաց արշավանքներից վերադարձած եվրոպացի զինվորները Չինաստանից իրենց հետ բերեցին ձեռքով ներկված թղթի գլանափաթեթներ: Այս վաղ պաստառները շքեղ առարկա էին, որը հասանելի էր միայն հարուստ մարդկանց՝ իրենց բարձր գնով և բարդ դիզայնով: Հաջորդ մի քանի դարերի ընթացքում պաստառներն ավելի տարածված և մատչելի դարձան: 19-րդ դարն ընդունված է համարել պաստառի ոսկե դար: Առաջին կոմերցիոն պաստառները հայտնվեցին այս դարաշրջանում, ինչը հանգեցրեց դրանց լայն տարածմանը և մեծ ժողովրդականությանը: Դիզայներները, ինչպիսիք են Ուիլյամ Մորիսը և այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Forrest & Sons-ը, ստեղծեցին գեղեցիկ, բարդ նախշեր, որոնք կիրառվեցին պաստառային արվեստում:

Տպագրական տեխնոլոգիայի առաջընթացն ընդլայնել է պաստառների ոճերի բազմազանությունը՝ ավանդական ծաղկային մոտիվներից մինչև ժամանակակից երկրաչափական ձևեր [8]: Ավելին, կաչուն պաստառի ներդրումը հեշտացրել է տեղադրումը՝ վերացնելով խառնաշփոթ

սոսնձի և մասնագիտական օգնության կարիքը: Այս նորամուծությունը պաստառները դարձրեց ավելի մատչելի և գրավիչ նոր սերնդի ձևավորողների համար: Պաստառի պատմության մեջ որոշիչ դեր է խաղացել տպագրական տեխնոլոգիան: Այսօրվա թվային տպագրության տեխնիկան առաջարկում է աննախադեպ մանրամասներ և հարմարեցում, ինչը թույլ է տալիս ստեղծել դիզայնի և գույների լայն տեսականի: Պաստառը միշտ եղել է ավելին, քան պարզապես պատի ծածկույթ, դա ներսույթի դիզայնի հիմնական տարրն է:

Պաստառները կարելի է դասակարգել ըստ հետևյալ պարամետրերի՝ մակերեսի տեսակ, նախշ, խոնավակայունություն, խտություն և այլն: Ըստ արտաքին մակերեսի՝ մակատեսքի, դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ հարթ, ռելիեֆային նախշերով, որը ստանում են արտադրության գործընթացում մակերեսին նախշի դաջման միջոցով, պաստառներ, որոնք ընդօրինակում են տարբեր նյութերի ֆակտուրաները՝ գիպս, բայրամիքս, գործվածք և այլն:

Ըստ քաշի և խտության այն կարելի է բաժանել. թեթև - 110 g/m^2 -ից պակաս, ծանր - որպես կանոն, բազմաշերտ 120 g/m^2 կամ ավելի: Խոնավակայունության հիման վրա պաստառները կարելի է բաժանել. սովորական-այսինքն, չի ենթարկվում որևէ լրացուցիչ մշակման խոնավակայունությունը բարձրացնելու համար, կարող է դիմակայել միայն չոր մաքրմանը կամ փոշեկուլով մաքրմանը, խոնավակայուն-պաստառն ունի հատուկ ծածկույթ, որը կարող է դիմակայել թեթև կեղտոտ տարածքները խոնավ սպունգով կամ փափուկ կտորով սրբելուն՝ առանց լվացող միջոցների օգտագործման, լվացվող - կարող է դիմակայել ջրով մաքրմանը, նաև լվացող միջոցների ավելացմամբ, սուպեր լվացվող - պաստառները կարող են դիմակայել սրբելուն, ջրային մաքրմանը և լվացող միջոցներով մաքրմանը:

Այս դասակարգումները որոշակի առումով պայմանական են, քանի որ ժամանակի հետ պաստառների ավելի ու ավելի նոր տեսակներ են ի հայտ գալիս: Պաստառի նյութերը կարելի է բաժանել մի քանի խմբերի՝ թղթե, վինիլային, ֆլիզելինովային, տեքստիլ, հեղուկ, ապակեպլաստե, հանքային հիմքի վրա կառուցվածքային վերաներկվող, խցանափայտե, ֆոտո և բնական պաստառներ [9]:

Պատերի պաստառների կիրառումը դարձել է որմնանկարային գրաֆիկայի ժամանակակից մեթոդներից մեկը, որն առաջարկում է նորարարական լուծումներ արվեստի և դեկորատիվ ձևավորման բնագավառում: Պաստառները հնարավորություն են տալիս դիզայներներին կիրառել բարձր ճշգրտության տպագրություն՝ իրականացնելով բարդ գրաֆիկական լուծումներ, որոնք դժվար կլինեին ձեռք բերել ավանդական որմնանկարչական տեխնիկաներով: Այսպիսով, պատերի պաստառների կիրառումը որմնանկարային գրաֆիկայում ձևավորում է նոր ուղղություն, որը համադրում է գեղարվեստական արժեքը, գործնականությունը և ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունները:

Թվային տեխնոլոգիաների զարգացման հետ որմնանկարչության տեխնոլոգիաները և մեթոդները ևս փոփոխության ենթարկվեցին: Պաստառային որմնանկարներից գատ վերջին տարիներին նաև լայն տարածում են գտել ինքնակաշուն թղթե մակերևույթի վրա տպագրված

պատկերները, որոնք փակցվում են ներկած պատի մակերևույթին: Այս մեթոդի դրական կողմն այն է, որ պատկերից հոգնելու դեպքում այն կարելի է զգուշությամբ հեռացնել պատից: Բայց ինքնակաշուններն ունեն նաև բացասական կողմ, այն է՝ ժամանակի ընթացքում կաշուն մակերեսի թուլացումը և ինքն իրեն եզրային հատվածներից պոկվելը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ ցանկացած պատկեր, որը ներսույթին յուրահատկություն և ոճ է հաղորդում: Ինքնակաշուն թղթի տպագրությունը մեծամասամբ օգտագործվում է մանկական սենյակների ձևավորումներում, նաև այն կարելի է տեսնել կրթական կամ զարգացման կենտրոններում և ցուցասրահներում: Արհեստական բանականության գործիքների զարգացումը 21-րդ դարում ևս հսկայական ազդեցություն է թողել այս ոլորտի վրա: Դիզայները կարճ ժամանակում կարող է արհեստական բանականության առաջարկած հավելվածների և ծրագրերի միջոցով տալ հստակ շարադրված տեքստային հրահանգներ և ստանալ իր պատկերացրած պատկերը, այնուհետև կիրառել այն ցանկացած ոլորտում, ինչպես նաև ներսույթի պատերի համար նախատեսված ինքնակաշուն պատկերներ ստանալու համար:

Տեխնոլոգիական առաջընթացն արագ տեմպերով կլանում է աշխարհի յուրաքանչյուր ոլորտ: Ներսույթի հարդարման և շինարարության ոլորտներում օգտագործվող սարքավորումները նույնպես ստանում են այդ զարգացումների իրենց բաժինը: Ուշադրություն են գրավում հատկապես պատի և հատակի տպագրական մեքենաները՝ առաջարկելով այս ոլորտում ստեղծագործ և արագ լուծումներ: Պատի տպագրության տեխնոլոգիան առաջացել է 20-րդ դարի վերջին, ի սկզբանե օգտագործվել է հիմնականում գովազդային և արվեստի նախագծերի համար: Ամենավաղ տեխնոլոգիան համեմատաբար պարզ էր, օգտագործելով թանաքային տպիչներ, պատկերները պատերին փոխանցելու համար: Տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ մշակվեցին հատուկ պատի տպիչներ, որոնք առաջարկում էին ավելի մեծ ճշգրտություն, տպման ավելի մեծ չափեր և ավելի վառ գույներ: Այս մեթոդը թույլ է տալիս թվային տեխնոլոգիաների միջոցով ստանալ ցանկացած պատկեր, այնուհետև, տպագրական սարքի միջոցով այն տպագրել ցանկացած ուղղահայաց մակերեսի վրա: Հաճախ այս մեթոդի կիրառությունը կարելի է հանդիպել ժամանակակից ցուցասրահներում, թանգարաններում և կրթական կենտրոններում:

Պատի տպիչները մասնագիտացված սարքեր են, որոնք օգտագործվում է բարձր լուծաչափով պատկերներ կամ նմուշներ ուղղակիորեն պատերի կամ այլ ուղղահայաց մակերեսների վրա տպելու համար: Այս տեխնոլոգիան ժողովրդականություն է ձեռք բերել վերջին տարիներին՝ շնորհիվ տեսողականորեն ցնցող և հարմարեցված պաստառներ, գովազդներ և արվեստի գործեր ստեղծելու ունակության: Պատի տպիչներն առաջարկում են արդյունավետ լուծում պատի լայնածավալ տպագրության համար՝ վերացնելով ձեռքի աշխատանքի կամ ավանդական պաստառի տեղադրման անհրաժեշտությունը [10]: Պատի տպիչներն օգտագործում են բարձրորակ ուլտրամանուշակագույն թանաք: Պատկերն անմիջապես չորանում է պատի մակերևույթին, դիմացկուն է քերծվածքներին, ջրակայուն է և առանց հոտի: Այս սարքերը կարող են տպել տարբեր նյութերի

մակերեսներին՝ փայտյա, բետոնե, սվաղե, աղյուսե, քարե, ապակե, մետաղե: Բացասական կողմերից կարելի է նշել բավականին թանկ արժեքը [11]: Գոյություն ունեն նաև լատեքսային թանաքի կիրառմամբ տպիչներ: Սրանք լավագույնն են ներքին տարածքների, տան դեկորների և էկոլոգիապես մաքուր նախագծերի համար [12]:

Այս մեթոդն առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի միջավայրերում, որոնք ունեն տեղեկատվական գործառույթ, օրինակ՝ ցուցասրահներում, կրթական կենտրոններում և բիզնես-կենտրոններում, քանի որ նման գործառույթ ունեցող միջավայրերում առկա է պարզ և մասշտիվ կերպով տեղեկատվության փոխանցման հստակ խնդիր, այստեղ կարիք չկա բարձր ստեղծագործական մակարդակի արվեստի գործ ստեղծելու, այլ պետք է այցելուին փոխանցել որոշակի տեղեկատվություն, ինչը հիանալի կերպով կարելի է ստանալ պատի մակերևույթի տպագրության միջոցով:

21-րդ դարում նկարիչներն ու ճարտարապետները սկսել են օգտագործել նոր նյութեր և մեթոդներ, ներառյալ թվային տեխնոլոգիաները, պրոյեկցիոն շարժական ցուցադրությունները և լուսային նկարչությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել դինամիկ, փոփոխվող և հարմարվող արվեստի գործեր, որոնք կարող են արձագանքել շրջապատի փոփոխություններին և փոխազդել մարդկանց իրական ժամանակում: Հոյակերտ (մոնումենտալ) գեղանկարչության ժամանակակից օրինակները ներառում են միջավայրի մեջ պրոյեկցիոն պատկերազարդումներ, ցուցասրահների ձևավորման մեջ օգտագործվող տեսահոլովակներ, ինչպես նաև նմանատիպ մեթոդներով թատերական ներկայացումների ձևավորում, որոնք կարող են շարժման էֆեկտ ստեղծել և փոխել ճարտարապետության ու տարածության ընկալումը: Այս նոր ուղղությունը բացում է հնարավորություններ հարաբերակցող տարածքների ստեղծման համար, որտեղ արվեստն ու միջավայրի գեղարվեստական ձևավորումն անբաժանելի են դառնում մարդկանց առօրյա կյանքից: Օրինակ կարելի է բերել Ջեյմս Թարլի աշխատանքները: Իր նախագծերում նա օգտագործում է լույսն ու գույնը հոյակերտ մասշտաբով, ինչը թույլ է տալիս ստեղծել յուրահատուկ տեսողական տպավորություններ և դինամիկ կերպով փոխել տարածության ընկալումը: Հայաստանում ևս պրոյեկցիոն որմնանկարային գրաֆիկայի մեթոդը սկսում է կիրառելի դառնալ և զարգանալ. 2024 թ. հոկտեմբերին Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց «Երվանդ Քոչար – 125. հատելով ժամանակ և տարածություն» խորագրով ցուցահանդեսը, որի շրջանակներում կիրառվեց պրոյեկցիոն որմնանկարային գրաֆիկայի մեթոդը, 2024 թ. նոյեմբերին Սոս Սարգսյանի անվ. Համազգային թատրոնում «Աստղերու հավատքով» խորագրով թատերականացված ընթերցանության ժամանակ ներկայացման ձևավորումը ևս իրականացվել է այս մեթոդով: Մեթոդն առավել հարմար է կիրառել ժամանակավոր ցուցադրությունների, ներկայացումների և միջոցառումների ժամանակ, սակայն ոչ որպես երկարատև մնայուն արվեստի գործ, ինչպես, օրինակ, ավանդական որմնանկարները:

Մակայն, հարկ է նշել, որ թվային տեխնոլոգիաները պարզապես գործիք են և դրանց ինքնուրույն կիրառումը չի կարող փոխարինել բարձրակարգ նկարչի հմտություններին: Որմնանկարային գրաֆիկան կրում է առավել հոգևոր և մշակութային արժեքներ: Թվային տեխնոլոգիաների արտադրած գործերը հաճախ զուրկ են մարդկային հոգևոր ուժի անմիջական ներգործությունից, ինչը նվազեցնում է նրանց կապը դիտողի հետ:

Արդյունքներ և քննարկում

Որմնանկարային գրաֆիկան կարող է կիրառվել տարբեր միջավայրերում՝ առևտրի կենտրոններում, հասարակական վայրերում, բնակարաններում, ռեստորաններում, ուսումնական հաստատություններում և հանրային արվեստի նախագծերում՝ զարդարելով տարածքները որմնանկարներով, արվեստի նկարազարդումներով, ինչպես նաև տեղեկատվական ուղերձներով, ռգեշնչող մեջբերումներով և այլն: Կախված միջավայրի գործառնությունից դիզայներները հնարավորություն ունեն ընտրելու և կիրառելու համապատասխան նյութ և տեխնոլոգիա՝ հաշվի առնելով սոցիալական, էկոնոմիկական, գեղագիտական և այլ գործոններ: Խելացի տեխնոլոգիաների ինտեգրումը, որոնցից կրկին կարելի է նշել արհեստական բանականության տեխնոլոգիաները, ներգրավվում են որմնանկարային գրաֆիկայի ավտոմատացման և ճշգրիտ գործընթացներ ստանալու գործում [13]: Հաշվի առնելով յուրաքանչյուր մեթոդի դրական և բացասական կողմերը, դիզայներ նկարիչները նաև կարող են համադրել առկա մեթոդներից որոշները և հնարավոր լավագույն արդյունք ստանալ ներքին միջավայրի գեղարվեստական ձևավորման մեջ: Օրինակ, հնարավոր է նկարիչ արվեստագետը կատարի ձեռքի նկարազարդումներ, իսկ պրոեկցիոն որմնանկարային գրաֆիկայի միջոցով ապահովի որմնանկարի շարժական, լուսային և ձայնային էֆեկտները: Մա կարող է լինել ավանդական և նորարարական մեթոդների հետաքրքրական սինթեզ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով որմնանկարային գրաֆիկայի տարատեսակ մեթոդները, տեխնոլոգիաները և նյութերը 20-21-րդ դարերում, ակնհայտ է դառնում դրանց կիրառման հնարավորության բազմազանությունը: 20-21-րդ դարերում ներքին միջավայրի որմնանկարային գրաֆիկայում կիրառվող նյութերն ու տեխնոլոգիաները կրել են էական փոփոխություններ՝ ընդլայնելով գեղարվեստական արտահայտչամիջոցների սահմանները: Եթե 20-րդ դարում գերակշռում էին ավանդական նյութերը, ապա 21-րդ դարում դրանք համալրվեցին նորարարական տեխնոլոգիաներով, ինչպիսիք են՝ թվային տպագրությունը, լուսային շարժական արվեստն ու բազմաչափ հաղորդակցական լուծումները: Այս փոփոխությունները հնարավորություն են տալիս ստեղծել ոչ միայն նշագրված, այլև փոփոխական և միջավայրի հետ փոխազդող աշխատանքներ, որոնք ներգրավում են դիտողին և ինտեգրվում տարածքի գործառական բնույթին: Թվային տեխնոլոգիաների զարգացման ներկայիս տեմպերը հնարավորություն են տալիս նորարարական լուծումներ առաջար-

կել: Թեև այդ լուծումները զգալիորեն նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, նյութերի նոր տեսակի հայտնաբերմանը և որմնանկարային գրաֆիկական տեխնիկայի նոր միջոցների մշակմանը, դրանց կիրառումը դեռևս չի կարող փոխարինել բարձրակարգ նկարչի ձեռագրին, ստեղծագործ մտքին և արվեստագետի յուրահատուկ մոտեցմանը: Թվային տեխնոլոգիաները հիմնականում հիմնված են նախապես մշակված ալգորիթմների վրա, որոնք ընդունակ են վերստեղծելու կամ ընդօրինակելու որոշակի ոճեր: Այնուամենայնիվ, դրանք չեն կարող ներառել ստեղծագործական այն յուրահատուկ տարրերը, որոնք բնորոշ են յուրաքանչյուր արվեստագետի: Արվեստագետի ձեռագիրը՝ որպես անհատականության և զգայականության արտահայտում, որոշակիորեն բացակայում է թվային լուծումներում, ինչը նվազեցնում է աշխատանքի արժեքային բովանդակությունը: Թվային տեխնոլոգիաները, թեև առաջարկում են բազմազան գործիքներ, սակայն դրանք չեն կարող ամբողջությամբ փոխարինել արվեստագետի ստեղծագործ մտքի և ձեռագրի ներդրմանը: Դրանք կարող են օգտագործվել որպես օժանդակ միջոցներ՝ զուգակցելով դասական տեխնիկաներին, բայց առայժմ մնում են սահմանափակ՝ արվեստի խորքային և ստեղծագործական կողմերը վերարտադրելու առումով: Արվեստի բարձրարժեք ստեղծագործությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տեխնոլոգիան ծառայում է որպես աջակցող, այլ ոչ թե փոխարինող գործիք: Այսպիսով, 20-21-րդ դարերի տեխնոլոգիաների և նյութերի զարգացումը ձևավորել է նոր մոտեցումներ որմնանկարային գրաֆիկայում, որոնք միտված են օգնել դիզայներներին արվեստն ավելի խորությամբ ներգրավելու մարդկանց առօրյա կյանք և փոխազդել շրջակա միջավայրի հետ:

Գրականության ցանկ

- [1] **D. V. Thompson**, The materials and techniques of medieval painting. Courier Corporation, 2012, p. 23-24.
- [2] **A. Abdelrahman**, Murals between site-specificity and digital technology towards innovative mural design, International Design Journal, 5(3), 2015, p.1233-1244.
- [3] **M. Jaradat, Yu Miaomiao**, The Impact of Digital Technology on Contemporary Mural Art, Vol. 7, Issue 10, 2022, p. 923-925.
- [4] **Լ.Պետրոսյան**, Գրաֆիկական լուծումների կիրառությունը ներքին միջավայրի դիզայնում, Գեղարվեստի Ակադեմիա, Տարեգիրք, Երևան, 15, 2023/2, էջ 74:
- [5] The Rise Of Mural Art In The 21st Century – Faster Capital (17.07.2024).
- [6] **Ch. Grund**, Painting Murals Step by Step, 2003, p. 144.
- [7] **R. Prima and Ph. Cornog**, Wonder Walls: How to Transform Your Space with Colorful Geometrics, Graphic Lettering, and Other Fabulous Paint Techniques, 2021, p. 204.
- [8] **E.A Entwisle**, The book of wallpaper: A history and an appreciation, Kingsmead Reprints; Revised edition, 1970, p. 151.
- [9] **L. Hoskins**, The Papered Wall The History, Patterns and Techniques of Wallpaper, Second Edition, 2005, p. 272.
- [10] **A. Al-Adam, and I. Al-Naimi**, Vertical wall printer, 2017, p. 71.
- [11] <https://www.wallpen.com/en/> 20.07.2024
- [12] The Comprehensive Guide to Printing on the Wall Technology, <https://iwallprinter.com/the-comprehensive-guide-to-printing-on-the-wall-technology/>, 2024.
- [13] **Li Shengju and Zhenzhu Wang**. Mural art in the context of new media: a new “crossover” of mural art driven by artificial intelligence. In 2nd Internat. Conf. on Language, Art and Cultural Exchange (ICLACE 2021), Atlantis Press, 2021, p. 530-533.

МАТЕРИАЛЫ И ТЕХНОЛОГИИ, ИСПОЛЬЗУЕМЫЕ В НАСТЕННОЙ ГРАФИКЕ В ИНТЕРЬЕРАХ 20-21-ЫХ ВЕКОВ

Лусине Петросовна Петросян

Государственная академия художеств Армении, г. Ереван, РА
Lus8990@gmail.com

В статье представлены материалы и технологии, используемые для создания настенной графики в интерьерах в 20-м и 21-м веках. В результате исследований выявлено множество инновационных методов и техник, которые применяются в наши дни для создания графических фресок. Применение этих технологий дает специалистам новые возможности для решения проблем в дизайне интерьера. В статье также представлены плюсы и минусы технологий и материалов, используемых в фресковой графике. Подробно рассмотрен каждый метод фресковой графики и используемые материалы, что поможет профессионалам в этой области выбрать наиболее подходящий материал и технологию для фрески, чтобы выполнить работу наилучшим образом. Статья направлена на оказание помощи как дизайнерам-иллюстраторам, так и дизайнерам-проектировщикам в их профессиональной деятельности, а также для ознакомления с современными методами и технологиями, используемыми при получении графических решений в интерьере.

Ключевые слова: материалы, технологии, метод, настенная графика, внутренняя среда, интерьер

MATERIALS AND TECHNOLOGIES USED IN MURAL GRAPHICS IN INTERIORS IN THE 20th-21st CENTURIES

Lusine Petrosyan

State Academy of Fine Arts of Armenia, Yerevan, RA
Lus8990@gmail.com

The article presents the materials and technologies used to create mural graphics in the interior in the 20th and 21st centuries. As a result of research, many innovative methods and techniques have been identified that are used today to create graphic frescoes. The use of these technologies gives specialists new opportunities to solve problems in interior design. The article also presents the pros and cons of the technologies and materials used in mural graphics. Each mural graphic method and materials used are discussed in detail to help professionals in the field select the most appropriate material and technology for the mural to get the job done in the best possible way. The article is aimed at providing assistance to both designers and illustrators, both to attract designers to their professional work, and to familiarize themselves with modern methods and technologies used to obtain graphic solutions in the interior.

Keywords: materials, technology, method, wall graphics, mural, internal environment, interior

Պետրոսյան Լուսինե Պետրոսի (ՀՀ, ք. Երևան) - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Դիզայնի ամբիոնի, դասախոս, ասպիրանտ, (+374)98229987, lus8990@gmail.com
Петросян Лусине Петросовна (РА, г. Ереван) – Государственная академия художеств Армении, кафедра Дизайна, преподаватель, аспирант, (+374)98229987, lus8990@gmail.com
Petrosyan Lusine (RA, Yerevan) – State Academy of Fine Arts of Armenia, Lecturer at the Department of Design, PhD student, (+374)98229987, lus8990@gmail.com

Ներկայացվել է՝ 27.11.2024թ.

Գրախոսվել է՝ 16.01.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.